


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուկարիոյ համար
Տարեկան ֆրք 10
Վեցամսեայ " 5
ԿԱՆԽԻԿ

20

ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Վերստահման
Տարեկան ֆրք 12
Վեցամսեայ " 6
ԿԱՆԽԻԿ

20

ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Կը հիւստարակոյի հաւաք օրերը : Ծա-
նուցման տողը 10 Սանդիմ : Երկու քիւ ա-
ռաջ հիւստարակոյի քերքը 40 Սանդիմ :
Զհիւստարակոյի գրոյ քիւնը եւ յսրոյի :

Հասցե
DIRAN PAPA ZIAN
BUE DRAGOMAN K. SIEPAN
(BULGARIE) VARNNA

ԹԵԹԵՒ ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ասկէ առաջ «Շարժում» է զատ տե-
ղական հայ թերթերը ընդ որս և մենք
հրատարակելով Պ. Ամիրխանեանցի մէկ
գրութիւնը, հաւասար ուժգնութեամբ
այսպնաւ էինք յիշեալ գրութեան մէջ
նշանակուած ազտոտ արարքի հեղինակ-
ները :

Այս անգամ Շարժում «Պ. Ամիր-
խանեանց» խորագրի ներքեւ խմբագ-
րական տեսութիւն մը հրատարակելով,
իր տվորական մեղրածու լեզուով առա-
ջին ֆրազը կը ձօնէ այդ գիրը հրատա-
րակող մամուլին, ըսելով թէ «Վերջին
ատեններս մէկ քանի պնակալէզ թեր-
թեր մեծ ազմուկով ծանուցին թէ յե-
ղափոխականները գրամ ուղեր են Պ.
Ամիրխանեանցէն» :

«Իրաւունք»ի և «Տաւրոս»ի ճաշա-
կին թողլով Շարժում, հրամցուցած այս
համեղ կարկանդակէն իրենց բաժնին
ինկած պատառները մարտեալ եղանա-
կը, մենք դառն հարկի մը ներքեւ կը
գտնուինք Շարժումի պէս սնապարծ թեր-
թի մը այս անճարակ խեղաթիւրման

պատասխանել առ այժմ թեթեւ աղա-
րարութեան մը ներքեւ :

Պարոններ,

Ի հարկէ այդ տողերը մրտած ա-
տեննիդ աչքի առջև ունէիք «Հայերի»
59 թիւը, ուր հրատարակուած էր խընդ-
րոյ նիւթ եղող գրութիւնը մեր խըմ-
բագրական դիտողութեամբ : Զէ՞ որ մենք
ըսեր էինք «Անշուշտ մեր յեղ կուսակ-
ցութիւններէն և ոչ մէկը չը պիտի հա-
մարձակի իր վրայ առնուլ այսպիսի ան-
պատուաբեր գրութիւն մը» : ու յետոյ,
չէ՞ որ աւելցուցեր էինք «Այս բանը բաց-
արձակապէս կեղծութիւնն է և մենք
կը պահանջենք կուսակցութիւններէն,
որ գոտեպնդին և յեղափոխականի ԴԻ-
ՄԱԿ ՀԱԳԱՄ այս տեսակ կեղծութիւն-
րոնք առաջը առնեն» :

Ասէ՛ ինչպէս կը տեսնուի, երբէք
չի հետեւիր թէ մենք ըսած ըլլանք որ
ՅԵԼԱՓՈՒՍԿԱՆՆԵՐԸ գրամ ուղած են
Պ. Ամիրխանեանցէն : այլ ընդհակառա-
կը : Ուստի դուք, կամ չիլ նայած էիք,
որ ծուռ կարդացիք գրութեանը և կամ
հոգեկան այնպիսի ազտոտ գրութեան մը
մէջ, որ չիտակ կարդալով հանդերձ,
ծուռ մեկնէիք և լորձանքներ թափէիք
դէս ու դէն :

Որն ալ ըլլայ, քանի որ իբր խմբագիրներ հանրային կարծիքն առաջնորդելու կոչումն ունիք, կը յորդորենք ձեզ շիտակ քալել և պարապ տեղը սուտեր հնարելով, առ ու ան վիրաւորելու անպարկեշտ մարմաջէն հրաժարիլ. հակառակ պարագայի մէջ զձեզ պիտի գտնէ մեր ծիծաղկոտ խարաղանը ուր որ ալ ըլլաք. . . աւելի շեշտուած համբոյրներով :

“”

Անցեալները «Շարժում» Պ. Արշակ Չոպանեանի ալ մէկ գրութիւնը խեղադիւրած էր, այս մասին մեծանուն գրադետին կողմէ շրկուած արժանաւոր պատասխանը այսօրուան «Իրաւունք»ի մէջ պիտի հրատարակուի :

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳԻՐՈՒԹԵԱՆ

Վառնա 4 Յունիս 98

. . . Խմբագիր,

Ի գիտութիւն ժողովրդեան կը ծանուցանենք թէ՛ ընդհ. Ռատախաչի կողմանէ մեր «Շարժում»ի հետ ունեցած դատին առթիւ պէտք եղած ազդագիրն յղուած է Շարժումի պատասխանատուին, և թէ հետեաբար մօտեցած է դատավարութեան օրը, զոր ի հարկէ նոյնպէս պիտի ծանուցանենք իր ժամանակին :

Յարգանք

Տ. ՃԳՆԱՒՈՐԵԱՆ

ՏՕՊՐԻԶԻ ՏՕՆԱՎԱՃԱՌԸ

(Մեր պատահական թղթակցէն)

1 Յունիս 98 Տօպրիչ.

Տօնավաճառներու շրջանն է հիմա, ճումաւի և Իսլիմի տօնավաճառներէն ետքը, այս անգամ Տօպրիչինն է որ 15 օր կը տեւէ :

Տօպրիչ՝ Վառնաէն 6—7 ժամ հեռաւորութեամբ գիւղաքաղաք մըն է. բնակիչները մեծ մասամբ կը զբաղին վաճառականութեամբ, ամենքն ալ գործի մարդիկ, բաւական թուով հայեր շատ կանուխէն հոս հաստատուելով, լաւ գիւրք մը ձեռք բերած են : Ունին կաթովիկէ գլխէթաւոր եկեղեցի մը, որ ամբողջ Պուլկարիոյ մէջ մէկ հատիկ է. ունին նաև երեսեւ վարժարան մը և ընթերցարան մը, ուր կաշիքի է գտնել մէկ քանի Պուլկարահայ թերթեր :

Տօնավաճառը քաղաքէն 20 վայրկեան հեռու, դաշտի մը վրայ շինուած է, 200՝ աւելի տաղաւարներով, որոնց մեծագոյն մասը հայեր : Ըռնած են. ահագին քանակութեամբ ապրանքներ ի տես դրուած են, հագնելիքի և ուտելիքի ամեն իր, ամեն առարկայ. ժխոր մը, իրարանցում մը, հեռուէն եկող մարդ մը անմիջապէս կը պաշարուի աղխանութպաններէն, մէկը կը քաշէ թեւէն, միւսը ձեռքէն. «Հրամայեցէք ակա, լաւ ապրանքներ ունինք, տեսակ տեսակ չէմպէրներ, եկի՛ւ, առիթէն օգտուէ, աժան պիտի տամ» վերջապէս մարդը ձա՛ծրացած՝ կ'ուզէ ժամ մը անաջ օձիքը աղատել ատոնցմէ :

Թէև ամեն տարի քիչ շատ բանուկ կըլլայ եղեր առուտուրը, բայց այս տարի քիչ կայ, անցեալ տարուան հոնձքերու նուազութենէն. գիւղացիին գրւպանը դրամ չի կայ, հետեաբար հիմա խանութպանները կը ցաւին որ այնչափ ծախքեր ընելով հոս եկած են :

Բայց միւս կողմէ շատ գոհ են անոնք, որ ամեն գիշեր մինչև առաւօտ ցօփ ու ալոտոտ եղանակաւ կանցնեն իրենց ժամանակը : Տասնէ աւելի զբօսարաններ կան, որոնց ամեն մէկը հարիւրաւոր ֆրանքներ կուլ կուտայ ամեն օր, պազարին մէջ որչափ որ ալ առուտուր չըլլայ՝ դարձեալ հոս դրամ կը շահին այդ գինեպանները :

Աս խանութներուն մէջ աղտոտ ու չլթիկ կիներ վարձուած են, որոնք թէ սպասաւորութիւն կընեն և թէ նուագածութիւն, իրենց արուեստակեալ ու լըպիրշ ձեւերով շատ մը կարճամիտներ թակարդին կը ձգեն. մարդ կը նողկայ տեսնելով այդ հրէշ կիները, որոնց էն պզտիկը 30էն 40 տարու, խռփած, թոշնած, կեղտոտ արարածներ, երեսնին չպար ու կարմիր ներկ առատօրէն քրսած են, որպէս զի գէմքերնուն խորշոմները ծածկուին. յոնքերու քսուած սնգոյրը (րաստը), թարթիչներու ծարիրը (սիւրմէ) երեսնուն կարմիր ներկին միացած՝ երևան կը հանեն այլանդակ ու պժգալի գլուխ մը, որոնց համար մարդ արհամարանքէ աւելի արգահատանք մը կը զգայ. այդ կիները մեր ընկերային զոհերն են, մեծաւ մասամբ մեր ազգէն, որ քաղքէ քաղաք, գիւղէ գիւղ ինքզինքնին ի տես կը դնեն:

Այս զբօսարաններէ զատ կան նաև ուրիշ զբօսատեղիներ, թատերաբեմեր, խումարի վրաններ, չէրչի նկարիչներ, լարախաղացներ, գուգլաճիներ, ևայլն: Գարմագարըշ խումբը իր հինգ վայրկեան տեւող խաղերովը կը փայլի իբր թատերաբեմ շինուած իսկէշէներուն վրայ:

Ահաւասիկ այս է Տօպրիշի տօնաւաճառը:

ՅՈՒՍԻԿ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

(Աժանս Բոժոժիկ և Ընկ.)

Բիւզանդիոն

Գասալիք բանակի առաջնակարգ հրամանատարներէն Տիրան քէլէկեան՝ «Սէլամը սէլամէթ էնճամաի բարեւները մատուցանելու համար գէպ ի Ժընէվ, Մարսէյ և Լոնտոն ուղևորեցաւ: Լրագիրներէ ոմանք այս ճամբորդութեան քաղաքական նշանակութիւն

մը տալ կ'ուզեն, բայց մենք կըսենք թէ՝ միմիայն Պիրա խմելու համար է և անկէջ անդին անցնելիք չունի:

Քաղ. Ժողովը իր վերջին նստին մէջ միաձայնութեամբ որոշեց առաջնորդութիւն մը հաստատել կեդրոնական բանտին մէջ, ուր բնակութիւն հաստատած են բազմաթիւ անմեղ հայեր:

Ս. Պատրիարքը երէկ տունը մնաց. ցորեկը ու իրիկունը ասորիական քաջաց ու գիշերն ալ լաւ մը քնացաւ. ահա այս պատճառաւ չկրցաւ Պատրիարքարան իջնել:

Լոնտոն

Քէլէկեան հացկերոյթ մը տուաւ և բաժակ առաջարկեց. . . Թիւթիւնճէֆի յիշատակին:

Մարսէյ

Եաֆաէն եկած փորթուգալիս գինը օր օրի իյնալու վրայ է, տաքերը կոխելուն պատճառաւ անոր պարունակած հիւթին ու նիւթին չորնալէն:

Ժընէվ

Բաց աչքով երկու կոյր վարձկաններու յանձնուեցաւ թերթի մը խմբագրութիւնը, որ ըստ պայմանագրի՝ կուսակցութեան մը հաշւոյն պաշտօն ունին սեին ճերմակ, ճերմակին ալ սև ըսելու:

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ

Տունով

Երկու զարգացեալ գլուխներու մէջ ընդհարում մը տեղի ունենալով, ճտկատ մը վիրաւորեցաւ և պատտօն մը կոտորեցաւ:

Ճակատամարտէն ետքը պատգամաւորութիւն մը ներկայանալով պատտօնակիր կողմին, առաջարկեց 24 ժամէն մեկնիլ քաղաքէն, ապա թէ ոչ. . . կուկո՛ւկ:

Ցաւակցական հետազոտներ սկսան տեղալ Վառնաէն Վառնա: Գօնսէրը ետ մնաց:

Մուսալլա

Ֆրէէին նոր բոթին մը ապսպրուեցաւ, իր բարւօք ծառայութեանը համար:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ՄԸ

Երեկ, վայելչապէս հագուած պարոն մը խմբագրատուն գալով, մեր Բոժոժիկի հետ հետեւեալ խօսակցութիւնը ունեցաւ.

— Պարոն Բոժոժիկ, ծառայականս անցեալները կռիւի բանուեցայ ստորագրաս մէկ ընկերոջս հետ, որ թէեւ ինձմէ անցոր՝ բայց յաջողեցաւ անարգել և մինչև իսկ երեք անգամ՝ ապտակել զիս 'ի ներկայութեան տիկնանց և օրիորդաց. ուստի եկայ խնդրել որ ձեր նախագահութեամբը պատուոյ տեսնանք կազմուի և հոն Բրկուքնիս ալ դատուինք:

— Բայց ո՞վ ըսաւ. բեղի թէ ես մէհքեմէ գատրսի եմ:

— Անաչառ ճանչցուած ըլլալնուդ համար է որ ձեզ կը զիմեմ. մինչդեռ մէհքեմէ գատրսիները՝

Ամենէն առաջ սա ըսէ ինծի թէ, դու ո՞վ ես, ուստի՞ գաս, կամ՝ յո՞ւ երթաս:

— Ես՝ առաջները նաւամատոյցին կեդրոնէն էի, հիմա ալ պանիրի բնագաւառի կեդրոնը մտած եմ.

— Կ'ուզես նէ՝ թուրում պանիրի մայրաքաղաքէն եղիր, առ չէ հարցուցածս:

— Ներկեք, կարծեցի թէ ո՞ր կուսակցութեան պատկանիլս կ'ուզէք հասկնալ.

— Ո՞ր կուսակցութեան կ'ուզես նէ՝ պատկանէ. ինծի համար ամենքն ալ մէկ են, սա քու անունդ ի՞նչ է, ի՞նչ կըսուիս.

— Յեղափոխականի անունովս Վահու նի կը կոչուիմ.

— Վախ ունիս մի՞ . . .

— Վախ ունիմ՝ չըսի, Վահունի.

— Է՛ տաիկայ քանի՞նրորդ անունդ է:

— Երկրորդ.

— Մէկուն պէս, որ առաջ կտրող-կապող կը կոչուէր, երկու շաբաթէ 'ի վերանունը փոխեր Առնեմ-Չիտամ է գրեր:

— Անանկ է.

— Ասոր պատճառն ալ՝ կուսակցութենէ մը արտաքսուած ըլլալը յայտնի չընելու համար է եղեր.

— Այդպէս է, պարոն Բոժոժիկ:

— Է՛յ, այդ կարգի խելացի՝ գալիմները կը կարծեն թէ ժողովուրդը կը խաբուի. երկու օրէն չի՞ պիտի հասկցուի որ անունները թէեւ փոխուած են բայց դերերն ու անձերը նոյնը կը մնան: Այսօր, կուսակցութիւն մը իր հակառակորդ կուսակցութեան մէկ անդամին համար գող, աւաղակ, ոճրագործ ու մատնիչի անունը կուտայ հըրապարակաւ, վաղը երբ այդ մարդը կուգայ իր գիրը կիյնայ՝ ուրախութեամբ կ'ընդունի և վարդի պէս կը հոտուրտայ կոր զայն: Նաղարբէկեան մը զեղծումներ ու կեղտոտութիւններ ընելէ ետքը երբ բողբոլփն բացը կը մնայ, շունչը անմիջապէս դաշնակցութեան պիւնօն կամ միութեան սալօնը կ'առնէ կոր. դաշնակցութենէ արտաքսուած մը՝ իր կեղտոտութիւնները պարտկելու համար կը վաղէ նաղարբէկեան կամ Ալֆարահաններուն գունէն ներս կը մտնէ, անգիէն միութեանիս խաչագող մըն ալ, առանց հարցուիորձի, համակրութեամբ կ'ընդունուի արմենականներէն, ու կեղծարարութիւնը, այս իրարու փոխ տալ անելու գրութեամբ անգտար ընդմիջ կը գտնայ կոր կուսակցութեանց մէջ:

— Շատ ճշմարիտ են այդ ըսածներդ պարոն Բոժոժիկ.

— Ինչ որ է, հիմա գանք քու առաջարկիդ, դուն կ'ուզես որ ընկերային տեսնանք մը կազմելով զձեզ երկուքդ գտնեմ.

— Այո, որպէս զի իմ անմեղ ու անպարտ ըլլալս աշխարհի հաշակես:

— Թո՛ղ թէ, աչքերուդ նայելով, անպարտ ու անմեղ մը ըլլալդ ինծի համար քիչ մը կասկածելի է ամա, ինչ որ է:

— Է, հիմա իմ առաջարկս չպիտի՞ ընդունիր.

— Ըսենք թէ ընդունեցանք, բայց այդ ըսած տեսնող կազմելու համար մինակ ինձմով չըլլար. մէկ երկու խորհրդական ալ պէտք է:

— Դուն թէեւ խորհրդականի պէտք

չունիս, սակայն օրէնքը տեղը տարած ըլլալու համար մէկ երկու դատարկապորտ մարդիկներ քովդ կ'առնես կը նստիս, զորօրինակ թալիգածի մը, շարդավածի մը ու լուստրօճի մը, որոնք ասանկ բաներու վրայ գաղափար չունենան ալ նէ՝ հոգ չէ, մեր գործին կուգան, բաւական է որ յենգո՞ր կը կոչուին:

— Աղէկ ա', միջապայրին մէջ շէնքով շնորհքով խոհուն մարդ չի կայ որ ադ մարդիկը կ'առաջարկես:

— Պատճառը չե՞ս գիտեր Պ. Բոժոժիկ:

— Հասկցայ, մարդ շատ կայ, բայց անոնց մէջէն չեղորը դատելը դժուարին է:

— Այդպէս է:

— Հէ՛մ՝ բեզի բան մը ըսե՛մ. ադ շարդավածի ու թալիգածիները ո՛րչափ ըլլան նէ այս տեսակ խնդիրներու մէջ չեղոր մարդու դեր կերպով մը կրնան կատարել, բաւական է որ քիթերնուն մէջ մէկ գաւաթ սուրճ կամ թէյ տանք, բաքէթ մըն ալ թիւթիւն տուի՞նք մի, երեք ա՛միս շարունակաբար մեր պօռուն կը չալեն:

— Այդպէս է:

— Ուրեմն այդ առաջարկած ատենդ կազմելու ենք, բայց նայէ, հիմակունէ կիմացնեմ քեզի. գիտես ա', անաչառապէս պիտի դատեմ:

— Ատանկ ընկերուդ վստահ ըլլալուս համար է որ ձեզ կը դիմեմ:

— Զորօրինակ, քանի՞ ապտակ կերայ ըսիր:

— Երեք:

— Ո՛ւր կերար:

— Տիկնանց ընկերութեան մը մէջ:

— Թերհաշիւ սա կիմացնեմ քեզի որ քիչ ես կերեր. հինգ-վեց հատ ուտելու էիր:

— Ինչո՞ւ:

— Կեցիր որ ըսեմ, դուն չէի՞ր ասկէ առաջ երկու սէրի վրայ ընդարձակօրէն ճառելով խոստովանող թէ կնոջ սէրը քեզի համար նշանակութիւն չունէր, յեղափոխութեան սիրոյն քով:

— Ատանկ բան մը միտքս կուգայ:

— Ադ խոստովանութիւնը ընելէդ ետքը ալ ի՞նչ երեսով կերթաս կնիկներուն ու աղջիկներուն մէջ կը մտնես ու անոնց սիրային ձայնէն կը փնտռես սրտիդ մխիթարանքը: Ինչո՞ւ անոնց ներկայութեանը բոլ բարձրութիւնդ ցոյց կուտաս քեզմէ ստորին կարծուած մէկու մը հետ կ'ուտելով:

— Ա՛հ, պարոն Բոժոժիկ. հիմակուց կը հասկնամ թէ ատենին մէջ դուն զիս պիտի դատապարտես:

— Հապա ի՞նչ գիտցար, արդարօրէն թեամբ պիտի դատեմ ըսի. ու եթէ զիս քեզի բարեկամ կընդունիս, խօսքս մտիկ ըրէ, ձայնդ քեզ քաշէ, ատենին մատենի պէտք չի կայ, կերած երեք ապտակիդ համար Աստուած պիտի փէշդ տայ ըսէ ու տեղդ խելօք նստէ:



ՈՐԿՐԱՄՈԼ ՈՒԽՏԱԻՈՐԸ

Անցեալները նպարավաճառին մէջ կը խանութին մէջ նստած՝ կը ճաշէր. այն միջոցին իւր բարեկամներէն մէկուն մօտէն անցնելը տեսնելով՝ զայն կը բարեւէ եւ անքաղաքավար չի համարուելու մտօք «հրամանքէք» մը կը ըսէ: Բարեկամը ամենայն սիրով կ'ընդունի այս հրաւերը եւ կը սկսի կերակուրը արագաբար լափել, որով հիւրնկալը զարմանաւ հար՝ կը պարտաւորի կէս կուշտ կէս անօթի ետ քաշուիլ, եւ քաղաքավարութեամբ հարցնել թէ «այնպէս շտապաւ անօթի փորանց ո՛ւր կերթար»:

— Եղբայր, կ'ըսէ որկրամոլ լեցուն բերնով, երկու երեք շաբաթէ՛ ի վեր ախորժակս գոցուած ըլլալուն ուխտ ըրեր էի եկեղեցի երթալ. յարմար ա-

ռիթմը այսօր գտայ, ու հոն կերթայի՝ երբ զիս հրաւիրեցիր :

— Շատ աղէկ որոշեր ես, կը պատասխանէ նալարավաճառը, միայն կը խնդրեմ որ եկեղեցիէն վերադարձիդ, խանութիս առջևէն չ'անցնիս :

ԹԻԼԷՖՕՆՈՎ, ԱՄՌԻՍՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՉԱՆՔԸ

Անցեալները Ամերիկայի Ինտիմնուպոլիս քաղաքի արուարձաններէն սեւամորթ մը ծանօթ լրագրի մը մէջ յայտարարութիւն մը կրնէ թէ, հարուստ ճէնդըլմէն մը իւր կինը կորսնցնելու դժբաղդութիւնը ունենալով այրի մնացած է երկու որբերով որոնց հոգատարութեան համար պէտք կզգայ համեստ, կրթեալ, տանտիկին, գեղանի ու դեռատի կնոջ մը՝ իբր ամուսին :

Այրի կին մը, որ հակառակ իւր անընկուն աշխատութեան, միշտ կը տառապէր նիւթական ծայրայեղ անձկութեամբ, իւր անտանելի վիճակէն զզուած և հրապուրուելով, կեղծ « հարուստ ճէնդըլմէնի », յայտարարութենէն, իսկոյն մէկդի կը նետէ թերթն ու գործը և կը դիմէ գրչի ու մելանի՝ պատասխանելու այդ բարեբաստիկ յայտարարութեան, երազելով թէ իրեն համար կեանքի ու երջանկութեան նոր դուռ մը բացուած է :

Իր նամակի գողտրիկ ոճն կը յայտնէր զարգացեալ մտքի մը նշաններն և իւր լուսանկարն որ ցոյց կուտար սիրուն և գեղանի կնոջ մը դիմագիծը, բոլորովին կը գրաւեն « ճէնդըլմէն »-ին սէրն ու խելքը : Եւ որովհետեւ իրարմէ հեռու քաղաքներու մէջ կը բնակէին, կարծեցեալ հարուստը վախճալով որ չըլլայ թէ իւր գոյնն երեւան գայ, փոխանակ նամակի՝ թէլէֆօնով կը սկսի բանակցիլ իր անծանօթ պաշտեցեալին հետ :

— Թէլէֆօնով իրենց ունեցած առաջին տեսակցութեամբ երկու անծանօթ սիրահարները կորոշեն իսկոյն ամուսնանալ և առանց վայրկեան մը կորսնցունելու կը հը-

րաւիրեն երէցներն ու պաշտօնական մարմինները՝ ամուսնութեան արարողութիւնը կատարելու : Հարսը թէլէֆօնի մէկ ծայրը կեցած՝ փեսան միւս ծայրը, քաղքէ քաղաք կը պսակուին թէլէֆօնի հաշորդակցութեամբ : Արարողութենէն վերջ, հարսն այնքան անհամբեր տեսնելու իր հարուստ ամուսինն, իսկոյն ճամբայ կելնէ որոշեալ տեղն հասնելու ու վայելելու մեղրալուսինը :

Փեսան պէտք եղած միջոցները ձեռք կառնուլ ներկերով իր սեռութիւնը ծածկելու եւ կը դիմաւորէ հարսն, որոյ կը հանդիպի դիշերուան ժամը տասնին կայարանին մէջ և առօք փառօք կը տանի իր սուռնը ուր կանցընեն գիշերը :

Հետեւեալ առտուն կինն անկողնէն կելնէ և կը տեսնէ որ իր ամուսինը սեւամորթ է եղեր : Կրնաք երեւակայել յուսախաբութիւնը. այս սոսկալի խաբէութենէն զայրացած, իսկոյն կը դիմէ դատարան եւ ամուսնալուծում կը պահանջէ ու դժուարաւ կը յաջողի :



ՇՈՒՆԻ ՀԱՄԱՐ ԿՈՒԻ

— Գէորգ աղա, աս գիշեր ֆիտէլին համար լահաթի լօխում բերի՛ր :

— Ձէ, մոռցայ :

— Իշթէ դուն առանկ ես, օր մըն ալ բան մը ըսեմ տէ խօսքս տեղը երթայ. մարդ ապսպրելուն պիլէ բիւշման կըլլայ :

— Անանկ է նէ՛ ապսպրած մըլլար :

— Առտուն քունս ծախեցի արթն-

ցայ, տառը բերան «աման չի մոռնաս»
ըսի, զավալը հայվանը կէնէ մինչև լուս
պիտի պոռայ:

— Է ի՞նչ ընեմ կնիկ, ես պատառ
մը հաց անճախ կրնամ կոի ճարել. ա-
մէն մարդ տունէն թէտէրէն պիլէ կը
վերցունէ կօր քի բերան մը պակասը լ-
լայ տէյի. քու շանդ լօխոմը պիտի
մտմտամ:

— Ա՛ս ալ շատ տեսար. աղբարս
Սթանպօլ գնացնէ՝ ինծի հէտիյէ ըրաւ:

— Աղբարդ ասոր ուտելիք չէքէ-
րին փարանալ թող հէտիյէ ընէր:

— Արթըն տահա՞ նէլէր. դուն
հիմա ֆիտէլիսուալիք քսան բարայի
չէքէրն ալ շատ կը տեսնաս կօր.

— Ամիսը 30 կը նետէ, կնիկ, խա-
պօր ես:

— Բանմը պիտի ըսեմ ամա՛ խըղ-
միչ մըլլար:

— Ի՛նչ.

— Երկու հատ պակաս խմէ տէ աս
ըսածս բե՛ր.

— Կէնէ մի՛ պաշայեր, հիմա բէն-
ճիրէն բանալուս պէս՝ շունը սօխախին
օրթան կը նետեմ հա՛:

— Գիտեմ, կընես, դուն շատ բան
կընես:

— Իս մի՛ կատղեցուներ, կընեմ
կըսեմ կօր. աս շունին համար ամեն
գիշեր հետդ կռի՛ւ պիտի ընենք. ասոր
մարիֆէթը ի՛նչ է, մէյ մըն ալ, իյրէն-
մէտէն թող կուտաս քի քիթդ բերանդ
լղուըռտէ:

— Ես աչքիս լուսին պէս կը սի-
րեմ անիկայ, հէմ ի՛նչ մեղքս պահեմ,
քէզմէ հագիգէթի է:

— Վայ, անանկ է նէ հիմակու-
նէ թող չարչի երթայ հացդ ճարէ տէ
բէրէ՞. ըսելով՝ Գէորդ աղան շունը պա-
տուհանէն գուրս կը նետէ:

Այր և կին նոյն գիշերը մինչև ա-
ռաւօտ կռիւով անցուցեր են:

— Միւսիւ Օննիկ, հարսնիքդ ինչո՞ւ
մնաց:

— Կնքահայր չի գտնելուս պատճառաւ:

— Էյ Լուսաւորիչին ալ կնքահայր չի

գտնաս նէ ի՞նչ պիտի ընես.

— Ա՛լ ան ատենը պիտի ընեմ լմըն-
ցնեմ:

— Ի՞նչպէս.

— Մէկ ձեռքովս հարսին ձեռքը, միւս
ձեռքովս ալ խաչը պիտի բռնեմ:

Վ.

Անցած օր շուկային մէջ խանութպան
մը մեր Շողեր խաթունին կըսէ:

— Ի՛նչ պէտք է նայինք, ի՛նչ կը փըն-
տուք կօր.

— Հիչ, իմ փնտռածս ձեր բովը չի
կայ.

— Կայ մայրիկս, կայ.

— Ճանրմ. չի կայ ըսի ես.

— Է՛ ի՛նչ է փնտռածդ քի.

— Ճէպը լեցուն փնտացու մը:

Թիւ 1 հանելուկն էր ԿԵԴՈՒ. առաջին լուս
ծողը եղաւ Վ. Գիւլիւբեան:



Քրիտ ԱՐԻՒՆԵԼՈՒՆ ԴԱՐՄԱՆ

Քրիթը արիւնողին երկու ձեռքերը
գլխէն վեր բռնելով, խոնաւ թաշկինակ
մը գնելու է անոր գէմքին վրայ. եւ կամ
հասարակ աղը պաղ ջուրի մէջ հալեցնե-
լով փոքրիկ գրեխի (շիրինկա) մը միջոցաւ
ռունքերուն մէջ մտցնելու է:

ԵՐԳԱՐԱՆ
ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

ԿԱՄ

ԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ

ՓՈՔՐԻՅ ՏՂԱՅՈՅ

ԱԶԴ



ՀԱՇԱՐԱՆ ԵՒ ԶԲՈՍԱՐԱՆ

ՏԻԳԸՆ ԹԻՒՖԷՆԿՆԵՆ և ԸՆԿ.

Հաճի Բանաբօին ճիշդ գէմը

Արհեստին մէջ կատարելութեան հասած երիտասարդ հայու մը ձեռամբ սարքուած այս հովասուն, մաքուր ու գեղջական հաստատութիւն ոչ միայն պատիւ կը կը բերէ հայ ճաշակին, այլ եւ մեծ խթան մը կը ըլլայ որ հայ ու օտար փափկակեաներ իրենց գարնանային ու ամառնային ժամագրավայր մը ընեն զայն զբօսնելու ու ճաշելու:

Հարսանեաց և խնձոքներու սպասներ ալ կը գտնուին, որոնք դիւրամատչելի գիներով վարձու կը տրուին:


«Հայելի»ի Ա. տարւոյ թիւերը կազմեալ կը վաճառին գին տասը ֆր. Ա. Զարպհանէլեանի գրատունը:



ԿԱԼՎԱՆԻՍԹ

Ամեն տեսակ տպագրական կա-

ղապարներ պատրաստող, նաեւ անձնական և թէ՛ առևտրական կնիքներ: Սոյն կնիքները որ ըստ վերջին դրութեան պղինձէ կը շինուին, հրապարակի վրայ երեւցած քառաչուէ կնիքներէ աւելի զիմացկուն են և դիւրութեամբ կը տպագրուին. գինն ալ քառաչուի գինէն տարբերութիւն չունի: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Դիմել ի վառնա Զիլինկի-էր փողոց թիւ 561: Գին գոհացուցիչ:



Отговоренъ-редакторъ: Н. Драгулев

Печатница «Взаимность»—Варна.

ՏՊԱՐԱՆ

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԴԵՍԻ

Ամէն լեզուէ հրատարակութիւնք:

Այցետոմս, հաղէտոմս, նոմաակազլուխ, հրաւիրատոմս, բարենիշ. տոմսակ եւ այլն եւ այլն թէ՛ պարզ և թէ՛ ոսկեզօծեալ մէկ քանի գոյներով կը տըպագրուին: Քաղաքներէ եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Գին գոհացուցիչ: Դիմել Հայելիի խմբագրութեան:

Վայրկենական Տպագրութիւն

ԱՅՑԵՏՈՄՍԻ

100 հատը 2 ֆր. կը տպագրուի և նոր տուփին մէջ կը գտնուի Այցետոմսի գործածութեան հրահանգը պարունակող տէտրակ մը, որուն կողքին վրայ այցետոմսին տիրոջ անունը տպագրուած պիտի ըլլայ: Դիմել խմբագրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութեան թղթատարի ծախք 30 սանդիմը յաւանարարողին վրայ է: Դրամի փոխարէն Պուլկարական 5, 10 եւ 15 սանդիմնոց նախադրօշմ կ'ընդ ընդ ի: Ատնիկ:



ԳՈՒՀԱԿ

Ա. Պ. Ս. Պ. Յ. Ս.

Կամ Զուարճալի Բաղդադոյց ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով դիմել մեր խմբագրութեան: